Արձանագրություն N 2
«ՀՀԱՆԹԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան
«20» «մարտի» 2018թ.

ժ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մելքումյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյանը

Հ. Բաբլոյանը

Հ. Ավետիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Երիցյանը

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. «ՀՀԱՆԹԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ հասցեում:

1.1 սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1 հեռ. 540911

1.2 Հայտեր ներկայացրած «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», ՍՊԸ-ը ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 Հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը		Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ ԱԱՀ-ով
	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ		
	Գնային առաջարկները առանց ԱԱՀ	Գնային առաջարկները ԱԱՀ-ով	
	ԱԱՀ վճարող		
1	396937,5	476325	448950

3. Հանձնաժողովը ուսումնասիրելով հայտերը արձանագրեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող

գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում ու հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

3.1 Ներկայացված գնային առաջարկի հիման վրա նախնական տվյալներով հանձնաժողովը որոշեց՝

հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ը էլեկտրոնային ձևով ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Բանակցությունների վարվման օր նշանակել՝ 2018 թվականի մարտի 23-ը, ժամը 16:00-ին, ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ հասվեյում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ.Մելքումյան

Անդամներ՝

_____ Ա. Հարությունյան

_____ Հ. Բաբլոյան

_____ Հ. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Երիցյան